Հայաստանում հանածո վառելիքի սուբսիդավորման վերաբերյալ խորհրդակցություն ԿՁՆ հաշվետվությունների շրջանակում

Օրակարգի նախագիծ

16 նոյեմբերի 2021թ

8:00-10:30 (Փարիզ) | 11:00-13:30 (Երևան)

Գրանցվել Այստեղ

Ընդհանուր տեղեկություններ

Հանածո վառելիքի սուբսիդավորման (ՀՎՍ) բարեփոխումներն ու փուլային վերացումն ընկած են կլիմայի փոփոխության դեմ պայքարի և ածխածնի զրոյական արտանետումների ապահովման հիմքում: Տարբեր բացասական ազդեցությունների արդյունքում ՀՎՍ բարեփոխումները նույնպես դարձել են Կայուն զարգացման թիվ 12 նպատակի («Պատասխանատու սպառում և արտադրություն») թիվ 12.c թիրախն ու 12.c.1 ցուցանիշը, որոնք պահանջում են անարդյունավետ, տնտեսապես վատնող և էկոլոգիապես վնասակար ՀՎՍ-ների ռացիոնալացում և փուլային վերացում:

Միավորված ազգերի Շրջակա միջավայրի ծրագիրը (ՄԱԿ-ի ՇՄԾ, UNEP)՝ որպես ԿՁՆ-ների պահպանման պատասխանատու, մշակել է մի ձևանմուշ, որը թույլ է տալիս երկրներին ներկայացնել ԿՁՆ12-ի և հարակից 12.c թիրախի և 12.c.1 ցուցանիշի վերաբերյալ զեկույց: Հաշվի առնելով այն, որ առաջին անգամ է երկրներից պահանջվում ներկայացնել զեկույց նշված թիրախի և ցուցանիշի վերաբերյալ, ինչպես նաև հաշվի առնելով կադաստրի տվյալների իր բազայի (https://www.oecd.org/fossil-fuels/data/) միջոցով ՀՎՍ-ի քաղաքականության միջոցառումների մշակման գործում ՏՀՁԿ-ի փորձը՝ ՄԱԿ-ի ՇՄԾ-ն, ՏՀՁԿ-ի հետ սերտ համագործակցությամբ, առաձնացրել է փորձնական երկրներ՝ հաշվետվության ձևանմուշը փորձարկելու և դրա լրացման մեխանիզմի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու համար:

ՏՀՁԿ-ի վերլուծությունը ցույց է տալիս, որ Արևելյան գործընկերության (ԱլԳ) բոլոր երկրներից Հայաստանն առավել զգալի առաջընթաց է գրանցել էներգետիկ ոլորտին ուղղվող սուբսիդիաների վերացման և փուլային հրաժարման գործում: Հայաստանն ունի ամենաքիչ թվով (6) սուբսիդավորման սխեմաներն ու պետական աջակցության ամենացածր մակարդակը, որը 2019 թվականին կազմել է 5 մլն. ԱՄՆ դոլար՝ 2014 թվականի 42 մլն. ԱՄՆ դոլարի համեմատ:

Հաշվի առնելով հանածո վառելիքի սուբսիդավորման բարեփոխումներում Հայաստանի հաջողությունը և ՄԱԿ-ի ՇՄԾ-ի շահագրգռվածությունը՝ փորձարկել հաշվետվության ձևանմուշը նաև ՏՀՁԿ-ի անդամ չհանդիսացող երկրում, Հայաստանը առաջարկվել է որպես շատ լավ թեկնածու, որը կարող է ներգրավվել ՄԱԿ-ի ՇՄԾ-ի և ՏՀՁԿ-ի աշխատանքների շրջանակում փորձնական երկրների խմբում: Զեկույցի պատրաստումն ու ներկայացումը կնպաստի միջազգային ասպարեզում Հայաստանի հեղինակության բարձրացմանը:

Այս նախագիծը ֆինանսապես աջակցվում է Գերմանիայի շրջակա միջավայրի, բնության պահպանության և միջուկային անվտանգության դաշնային նախարարության կողմից, որը տրամադրվել է իր Միջազգային կլիմայի նախաձեռնության միջոցով: Այս աշխատանքը սերտորեն կապված է ԵՄ կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» (EU4Environment) ծրագրի հետ, որը, ի թիվս այլոց, աջակցում է ԱլԳ երկրներում հանածո վառելիքի սուբսիդիաների բացահայտմանը, չափմանը և ՏՀՁԿ ՀՎՍ-ների տվյալների շտեմարանում դրանց ընդգրկմանը:

Հանդիպումների նպատակները, ակնկալվող եւ ստացված արդյունքները

Հանածո վառելիքի սուբսիդավորման վերաբերյալ զեկույցի պատրաստման գործընթացը համաձայնեցնելու նպատակով ՏՀԶԿ-ն կազմակերպում է համատեղ խորհրդակցություն մասնակից բոլոր պետական գերատեսչությունների հետ: Խորհրդակցության հիմնական նպատակն լինելու է.

- Ներկայացնել ԵՄ ԱԼԳ տարածաշրջանում, այդ թվում՝ Հայաստանում հանածո վառելիքի սուբսիդավորման հետ կապված ՏՀԶԿ-ի աշխատանքի հիմնական արդյունքները և քննարկել ՀՎՍ-ների բարեփոխումների գործում Հայաստանի առաջընթացը
- Հստակեցնել Հայաստանում ՀՎՍ-ների բացահայտման և չափման հետ կապված բոլոր մեթոդաբանական խնդիրները
- Ներկայացնել և քննարկել ԿԶՆ-ին առնչվող ՀՎՍ-ների վերաբերյալ հաշվետվության ձևանմուշը լրացնելու Հայաստանի փորձը և համաձայնեցնել զեկույցի վերջնական տարբերակը, որը կարող է ներկայացվել ՄԱԿ-ին
- Հստակեցնել զեկույցը ՄԱԿ-ին ներկայացնելու գործընթացը և որոշել պետական այն կառույցը, որը կղեկավարի գործընթացը և հետագայում կապ կպահպանի ՄԱԿ-ի ՇՄԹ-ի հետ:

Օգտակար տեղեկություններ

Խորհրդակցությունը կանցկացվի վիրտուալ՝ ZOOM հարթակի միջոցով, 2021 թվականի նոյեմբերի 16-ին և կսկսվի Երևանի ժամանակով ժամը 11:00-ին: Այն կանցկացվի անգլերեն լեզվով, կտրամադրվի նաև հայերեն թարգմանություն: Փաստաթղթերի նախագծային տարբերակները կներկայացվեն անգլերեն և հայերեն լեզուներով:

Կոնտակտներ՝

Նելի Պետկովա տնտեսագետ/քաղաքական վերլուծաբան Nelly.petkova@oecd.org	Ջոնաթան Ռայթ նախագծի ադմինիստրատոր jonathan.wright@oecd.org

Օրակարգի նախագիծ
Հայաստանում հանածո վառելիքի սուբսիդավորման վերաբերյալ՝ ԿՁՆ հաշվետվությունների շրջանակում խորհրդակցության

Երեքշաբթի, 16 նոյեմբերի 2021

Ժամ	Քննարկվող հիմնական հարցերը
11.00 – 11.15	**ՏՀԶԿ-ի ներկայացուցչի ողջույնի խոսքը** *Քշիշտոֆ Միխալակ, Ծրագրի ավագ կառավարիչ, Կանաչ աճի և գլոբալ հարաբերությունների բաժին, շրջակա միջավայրի տնօրինություն (ՇՄ/ԿԱԳՀ),ՏՀԶԿ* **Մասնակիցների ներկայացման փուլ**
11.15 – 11.50	**Ինչու՞ է կարեւոր ՀՎՍ-ների մոնիթորինգը, եւ ի՞նչ գիտենք ԱԳ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, ՀՎՍ-ների լանդշաֆտի մասին:** *Նելի Պետկովա, տնտեսագետ/քաղաքական վերլուծաբան, ՇՄ/ԿԱԳՀ, ՏՀԶԿ* Դրան հաջորդում է հարց ու պատասխանի փուլը
11.50 – 12.15	**ՀՎՍ-ների վերաբերյալ ՏՀԶԿ-ի տվյալների բազան եւ ՀՎՍ-ների չափման հետ կապված հիմնական մեթոդաբանական խնդիրները** *Մարկ Մաթեո, վիճակագիր, Բնապահպանական գործունեության և տեղեկատվության բաժին, Շրջակա միջավայրի տնօրինություն (ՇՄ/ԲԳՏ),ՏՀԶԿ* Հաջորդում է հարց ու պատասխանի փուլը
12.15 – 13.00	**ԿՁՆ-ին առնչվող ՀՎՍ-ների վերաբերյալ հաշվետվությունների լրացված ձեւանմուշի ներկայացում** *Տիգրան Սեկոյան, հայաստանյան փորձագետ, և Մարկ Մաթեո, վիճակագիր, (ՇՄ/ԲԳՏ), ՏՀԶԿ* **ԿՁՆ-ին առնչվող ՀՎՍ-ների վերաբերյալ հաշվետվությունների լրացված ձեւանմուշի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ** *Լուրդես Սանչես, քաղաքականության ավագ խորհրդատու և Ինդոնեզիայի Կայուն զարգացման միջազգային ինստիտուտի ղեկավար, (ԿՁՄԻ, IISD)*
13.00 – 13.15	**Ձեկույցի պատրաստում ՄԱԿ-ին ներկայացնելու համար եւ գործընթացի իրականացում** *Հիմանշու Շարմա, Կանաչ հարկաբյուջետային քաղաքականության ցանցի կառավարիչ, Տնտեսական և հարկաբյուջետային քաղաքականության ստորաբաժանում, Տնտեսական բաժին, (ՄԱԿ-ի ՇՄԾ, UNEP)* Հաջորդում է հարց ու պատասխանի փուլը
13.15 – 13.30	**Խորհրդակցության ամփոփում եւ փակում** *Քշիշտոֆ Միխալակ, Ծրագրի ավագ կառավարիչ, (ՇՄ/ԿԱԳՀ),ՏՀԶԿ*